ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Արփինե Սարգսյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Կարլսռուհե և Օֆենբուրգ), 2022 թ. հունիսի 20-ից 24-ը:

Հրավիրող կողմը՝ Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) Հարավային Կովկասի և Հարավարևելյան Եվրոպայի բաժնի ղեկավար Ֆրանկ Հուփֆելդ:

Գործուղման նպատակը՝ Հայաստանում կառուցվող նոր քրեակատարողական հիմնարկի նախագծման փուլում ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկների ենթակառուցվածքների վերաբերյալ գերմանական փորձը:

Քննարկված թեմաները՝ քրեակատարողական հիմնարկների ենթակառուցվածքներ, վերասոցիալականացման գաղափարին ծառայող շինարարական լուծումներ, հիմնարկի կառուցման գործընթաց, հիմնարկում վերահսկողության իրականացում, քրեակատարողական ծառայողների պատրաստում և վերապատրաստում ու հարակից թեմաներ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գործուղման ընթացքում հունիսի 20-21-ը նախատեսվել է Կառլսռուհեի քրեակատարողական հիմնարկի, հունիսի 22-23-ը՝ Օֆֆենբուրգի, իսկ հունիսի 24-ը՝ Շտուտգարտի քրեակատարողական հիմնարկի ուսումնասիրության համար, իրականացվել է թե՛ տեսական, թե՛ գործնական ուսումնասիրություն, այդ թվում՝ այցելություն հիմնարկների տարբեր մասնաշենքեր: Քննարկվել են հիմնարկների ենթակառուցվածքները, շինարարական լուծումները, հիմնարկների կառուցվածքի

դրական և բացասական կողմերը, հիմնարկներում վերահսկողության իրականացման, դատապարտյալների պահման պայմանների առանձնահատկությունները, համեմատականներ են իրականացվել երկու երկրների քրեակատարողական համակարգերի միջև:

Բացի այդ, այց է կատարվել նաև Բադեն-Վյուրթեմբերգ երկրամասի քրեակատարողական համակարգի կրթական կենտրոն, որտեղ քննարկվել են քրեակատարողական ծառայողների պատրաստման և վերապատրաստման մոդելները:

Գործուղման ընթացքում Արփինե Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաև Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) Հարավային Կովկասի և Հարավարևելյան Եվրոպայի բաժնի ղեկավար Ֆրանկ Հուփֆելդի հետ: Արփինե Սարգսյանը կարևորել է Հայաստանում նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման հայեցակարգի մշակման հարցում ամիսներ շարունակ ցուցաբերած աջակցությունը: Ֆրանկ Հուփֆելդն իր պատրաստակամությունն է հայտնել արդյունավետ համագործակցությունը շարունակել նաև նոր հիմնարկի ներդրման հետագա փուլերում:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

Arpine Sargsyan

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

Արփինե Սարգսյան

29.06.2022 թ.